ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Գրական եւ Գիտական

Encyclopédie مجموعة علوم

ԽՄԲԱԳՐԱՊԵՏ - ՏՆՕՐԷՆ

Դ. ՐՈՒԱՏ

Բ. ՇՐՋԱՆ | Թիւ 32 | 1898 ՀՈԿՏԵՄԲԵՐ 10

Ամեն տեղի համար Տարեկան կանխիկ **50** դահեկան, Վեցամսեայ **26** իսկ եռամսեայ, **13** դահեկան: Օտար երկրաց համար տարեկան կանխիկ **15** Ֆրանք: Թղթատարի ծախքը խմբագրութեան կը վերաբերի: Հատը **40** փարայ: Գաւառներէ բօսքի բուլ ալ կ'ընդունուի **100** դրուշի տեղ **105** դրուշ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Այցելութիւն Գերմանիոյ Վեհ. Կայսեր և Կայսրուհոյն ի Կ. Պոլիս: — Գերմանիոյ Կայսերական Գերդաստանը. — ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ:
Ղ. ԲՈՂՍՏ. — Հանրագիտակի բաժինը Հայ Տիկնոջ և Օրիորդին համար:
Ղ. ԲՈՂՍՏ. — Մատենագրական. — Պատասխան առ Տոքդ. Ն. Տաղաւարեան:
Ղ. ԲՈՂՍՏ — Ճարտարարուեստական. — Թէ ի՞նչպէս կերակրեղէնները տուփերու մէջ կը պահեն:
Մ. Կ. ՄԱԼԱԲԵԱՆ. — Մեղուաբուծական. — Չէզոք մեղուները:
Ղ. ԲՈՂՍՏ — Գեանախնձորի մշակութիւնը:
Տ. ՊՕՉԱՃԵԱՆ — Գիտական խնդիրներ:
Թղթակցութիւնք, Ազդ ևն:

Հատը 40 փարայ

ՏՊԱԳՐ. ԳՐԻԳՈՐ Պ. ԳԱՑՍԷՐԵԱՆ
Կ. Պոլիս, Պապ. Սյի ճատաշեի, Թիւ 4

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

ԵՐԶՆԿԱ. — Ց. Տըմպրեան էֆ. — Ձեր համակրալիր գրութեան շնորհակալութիւն. ստացանք Բ. վճարքնիդ. յանձնած ենք ներփակ նամակը. Լառուսի հին անսիքլոբէդոին իր նորութիւնը կորսնցուցած է, նորը կը հրատարակուի, որ մինչեւ (C) գիրը հասած է. եթէ դիւրութիւն ունիք, կրնաք ուղղակի բերել տալ, որ ուժան ըլլայ։

ՊԱՆՏՐՄԱ. — Ա. Մարեան էֆ. — Հնդհուպ կը ղրկենք ընկալագրերը։

ԱԳ-ՀԻՍԱՐ. — Գ. Շահինեան էֆ. — Ձեր նամակին մէջ ներփակ Բ. վճարքնիդ ստացած ենք, շնորհակալութիւն. ներկերու վրայ անպատճառ պիտի գրեմ, անհոգ եղիք. պատճառը թերթիս ծաւալին փոքրութիւնն է որ, մէկ քանի նիւթերու վրայ միանգամայն չենք կարող գրել. իսկ գիտական խնդիրներու լուծումները չի դնելնուս պատճառը, տպարանի փոփոխութիւնը եղած է, բայց ի մօտոյ պիտի սկսինք այդ լուծումներու օրինակներն ալ դնել։

ՈՒՐՖԱ. — Թորոս էֆ. Պօնճուքճեան. — Պալենց գրատան միջոցով ստացանք ձեր վեցամսեան, թերթերը կը ղրկենք։

ԳԱՐԹԱԼ. — Ե. Ց. Էթմէքճեան. — Իրաւունք ունիք, սխալմամբ թիւ 17 հանելուկի լուծողաց կարգին մէջ մոռցուած էր ձեր անունը։

ՊԱՐՏԻԶԱԿ. — Ս. Մակարեան էֆ. — Շնորհակալութիւն ձեր ազնիւ ջանքերուն։

ՌՈՏՈՍԹՕ. — Պ. Տատիգօվեան էֆ. — Նամակ ղրկած էինք ձեզ գործակալութեան համար, ինչ որ Մ. Կ. Մալաքեան էֆ. յանձնարարած էր մեզ, բայց ցարդ պատասխան չենք ստացած։

ՄԱԼԿԱՐԱ. — Վ. Մ. Զօլաքեան էֆ. — Քանիցս նամակ ղրկեցինք, անհամբեր ձեր պատասխանին կ'սպասենք. հաճեցէք այս տաղտուկէն ազատել զմեզ։

ԿԷԼԻՊՕԼՈՒ. — Ց. Վ. Տ. Յովսէփեան. Ստացանք նամակնիդ, շնորհակալութիւն ձեր ջանքերուն. մենք ձեր վրայ մեծ վստահութիւն ունինք. մեր գրածը ուրիշ բան չէր, բայց եթէ հասկնալու համար թէ, արդեօք հաւկիթներու պահպանման մասին մեր ցոյց տուած միջոցէն գոհ մնացած կիք. սհաւասիկ ձեր հարցման պատասխան. կրնաք մարած կիր ալ գործածել, բայց չի մարածը նախապատիւ է. միայն թէ, հաւկիթները խաշելէ առաջ պէտք է անգամ մը լուալ, ինչպէս և արտածութեան ժամանակ երբ կրաջուրէն դուրս հանէք, լուացէք, չորցուցէք և այնպէս յարդին մէջ զետեղեցէք։ Թղթատարի խնդիրը կը կարգադրուի։

ԿԷԼԻՊՕԼՈՒ. — Գ. Վ. — Հաճեցէք ուղղակի Ց. Բ.ի գրել. խօսած եմ իրեն հետ պէտք եղածը, կինայ նպաստաւոր ըլլալ։

ՍԵԲԱՍՏԻԱ. — Ց. Գարակէօզեան էֆ. — Գրութիւններդ ստացած ենք. պակասները կը ղրկուին. «Հանրագիտակ»ի Ա. շրջանի մէջ հրատարակուած թիւերուն գինը 60 դահեկան է, եթէ կուզէք, հաճեցէք իմացնել, անմիջապէս կը ղրկուի։

ԱՏՍ-ԲԱԶԱՐ. — Կ. Ս. — Քարթ-Բոսթանիդ ստացած ենք, բայց մատիտով գրուած ըլլալուն դժբաղդաբար անընթեռնելի դարձած է, հաճեցէք հարցումնիդ կրկնել։

ooooooooooo

ԳԻՏԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ԺԸ.

Հատուածակողմի մը ծաւալն է 80 խորանարդ մէթր, եթէ իարիսիը 9 քառակուսի մէթր աւելցնելով բարձրութիւնը 1 մէթր պակսեցնենք՝ ծաւալը 20 խորանարդ մէթր կ'աւելնայ. ո՞րչափ է իարիսիը և բարձրութիւնը։

* * *

ԼՈՒԾՈՒՄՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՈՒ

ԺԳ. Խնդիրն՝ որով տպածոյի մը մէթրին գինը հասկնալ կ'ուզուէր.

Լուծեր են.

Պյք. Երուանդ Մ. Տէրոյեանեան աշակերտ Վիէննական Մխիթարեան վարժարանի ի Բանկալթի. — Պետրոս Ս. Աբիկեան աշակերտ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Ուսումնարանի յԱղճամի. — Արշակ Պախթիարեան աշակերտ նոյն Ուսումնարանի. — Յովհաննէս Մ. Մանուէլեան, աշակերտ Սէն-Պէնուա վարժարանի. — Գ. Շահինեան, Ագ-Հիսար. — Ա. Մ. Կէնճեան, Ատաբազար. — Յովսէփ Ց. Ապտալեան. — Օննիկ Համամճեան. — Թ. Մանասեան. — Յովհաննէս Անդրէասեան, Սեբաստիա, լուծում չունի՝ միայն պատասխան գրել տուեր է ուրիշին։

Պատասխան. 96 փարա է տպածոյին մէթրը, որոյ լուծումը յաջորդ թիւով կը ներկայնենք յարգոյ բաժանորդաց փափաքին համաձայն։

Տեղերնուս անձկութեան պատճառաւ, Հանելուկ և Լուծմունք յառաջիկայ թերթով պիտի հրատարակենք։

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Գրական եւ Գիտական

Encyclopédie مجموعهٔ علوم

ԽՄԲԱԳՐԱՊԵՏ - ՏՆՕՐԷՆ

Դ. ՐՈԼԱՏ

Բ. ՇՐՋԱՆ | ԹԻՒ 32 | 1898 ՀՈԿՏԵՄԲԵՐ 10

آلمانیا ایمپراطوری حشمتلو ویلهلم حضرتلری
Wilhelm II.
Seine majestaet der Deutsche Kaiser
ՕԳՈՍՏ. ՎԻԼՀԵԼՄ Բ.
Կայսր Գերմանիոյ

آلمانیا ایمپراطورچه‌سی حشمتلو آوغوستا ویقتوریا حضرتلری
Augusta Victoria
Ihre majestaet die Deutsche Kaiserin
ՕԳՈՍՏ. ԱԻԿՈՒՍԹԱ-ՎԻԿՏՈՐԻԱ
Կայսրուհի Գերմանիոյ

حشمتلو امپراطور حضرتلری اللہ عائلۂ کرامی
Die Kaiserliche Familie
Գերմանիոյ Կայս. Գերդաստանը

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ
ԳԵՐՄԱՆԻՈՅ ՎԵՀ. ԿԱՅՍԵՐ ՆԻ ԿԱՅՍՐՈՒՀՈՅՆ
Ի Կ. ՊՈԼԻՍ

Օսմանեան հզօր Պետութեան գեղաշուք Ռատանն՝ Կ. Պոլիս, յիշատակութեան արժանի Օգոստոսյանծ այցելութիւն մը կ'ընդունի այս Երեքշաբթի (6 Հոկտ.), որ ամբողջ քաղաքը խրախճանաց և փառաւոր արարողութեանց հանդիսավայր մը կը դարձնէ։

Արշալոյսին հետ, համայն քաղաքացիք մեծ ոգեւորութեան մէջ, ակնդէտ իրենց Օգոստափառ Այցելուներն ողջունելու կ'սպասեն, Վոսփորէն մինչեւ Մարմարա։

Առաւօտը շատ գեղեցիկ էր, գարունէն մոռցուած և յանկարծ երեւան ելած օրուան մը պէս. երկինքը պարզ, օդը հանդարտ էր. կուսական քողի մը պէս թեթեւ մշուշ մը կուգար գեղազարդել Վոսփորի ափերը, բնութեան մէկ շնորհն էր, որ կը ցոդցէր և կը տարածուէր վեհաշուք Ռատանին վրայ։

Գերմանն գեղանատան Լորէլէյ պահականաւն, և Գերմանն գաղթականութեան վարձած Ռումանական Ռէկէլ Բառոլ Ա. շոգենաւը. Վեսթան, ինչպէս և Աւստրիական Լոյդ ընկերութեան Պոհեմիա անուն մեծ շոգենաւն, և Շիրքէթի ղայդ մը շոգենաւերն, կանուխէն մեկնեցան դէպի Մարմարա, Օգոստափառ Այցելուներն դիմաւորելու համար։

Երեք սպիտակութիւր մարտանաւեր,

آلمانیا خارجیه ناظری موسیو بولوجنابلری
Մ. ՏՐ ՊԻԼՕՎ
Գերմանիոյ արտաքին Գործոց Նախարար

որոց կը հետեւէին ուրիշ կարգ մը նաւեր, հրթիռներ ճեղքելով, դէպ ի Վոտփոր կը յառաջանային վերջապէս։ Ժամը երեք ուկէսին շքեղապանծ տեսարան մը կը պարզուէր Վոտփորի վրայ։ Գերման Կայսրութեան «Հոէնձոլլերն» դեղազարդ զբօսանաւն առջեւէն, որու կը հետեւէին «Հելա» և «Հերթա» Գերման յածաւորակներն, կը կազմէին Գերման այցելու տորմիղն։ Յետոյ կուգային Օսմ. Կայս. «Իզզէտտին» և «Սուլթանիյէ» զբօսանաւերը, «Ասարը Թէվֆիգ» և «Իճլալիէ» Օսմ. մարտանաւերը, ընդ որս և Թօրփիլանաւեր, որոց ներկայութիւնը պատկառելի երեւոյթ մը կ'ընծայէր այս հմայիչ տեսարանին։ Ասոնց կը հետեւէին Գերման դեսպանատան դահականաւը, Գերման դաղթականութեան վարձած շոգենաւերը, զբօսաշրջիկներու շոգենաւեր և կարգ մը փոխադրանաւեր, որոնք այցելու նաւատորմիղին ճամբան հանդիպելու բաղդն ունենալով, հետեւած էին անոր։

Թօփհանէի առջեւ կեցող Օսմ. Պահակ շոգենաւը թնդանոթի հարուածներով ողջունեց Գերման Տորմիղն, որ հարսի մը պէս դանդաղ այլ վեհաշուք ընթացքով կը յառաջանար դէպ ի Տոլմաբաղչէ, ուր կանգ առաւ։ Առաջին անգամ Հոէնձոլլերն կը կառանէ մէջտեղի խարսխանիշին, Հերթա Պէշիքթաշի կողմը, իսկ Հելա Դոլմաթաշի կողմը։

Հաղիւ թէ զբօսանաւն կը խարսխեր, Վիլհելմ Կայսրն հրաման արձակեց, որ Օսմ. դրօշն պարզեն մեծ կայմին վրայ. մինչեւ այն ատեն տակաւին Գերման ծովակալի համազգեստն կը կրէր Ն. Վեհափառութիւնը, ուրկէ անմիջապէս վերջ, ներս քաշուելով, իւր Լէյտկառա հեծելադունդի վայելչազարդ համազգեստն

خارجیه وصحیه ناظری دولتلو توفیق پاشا حضرتلری
Seine Excellenz, Tewfik Pacha,
Minister des Auessern
ԲԱՐՁՐ. ԹԻՎՖԻԳ ՓԱՇԱ.

Արտաքին Գործոց Նախարար

հաղնելով, Կայսրուհոյն հետ նաւակամուրջին վրայ կ'երթայ։

Նոյն միջոցին, առաջնորդութեամբ Մեծ-Եպարքոս Խալիլ Բիֆաթ փաշայի, Կայսերական հրաւիրակներն՝ Ծովային Նախարար Հասան փաշա և Խարիճիէի Արարողապետ Իպրահիմ պէյ, Հօէնձոլլերն դացին, և յանուն Վ.Հ. Սուլթանի, բարի գալուստ մաղթեցին Վիլհելմ Բ.ի և Աւկուսթա Վիքթորիա Կայսրուհոյն, և հրաւիրեցին ի Կայս. Պալատ։

Հօէնձոլլերէն մեծ մակոյկ մը ծովը կ'իջեցուցեն, որ կը մօտենայ սանդուխին, և Կայսրը, իր թեւն առած Աւկուսթա Կայսրուհին, կ'իջնեն և կը բազմին մակոյկին մէջ, զոր կը զեկավարէր ծովային Գերման տեղակալ մը։

Մակոյկը բացուած պահուն, զբօսանաւէն թնդանօթ մ'արձակուեցաւ, որու յաջորդեցին նաւաշներու կողմէ Հաւրրաներու մեծադղորդ աղաղակներ։ Իսկ Գերման գաղութին յատուկ շղենաւին և Օսմ. շղենաւերու մէջէն նաւադարանները Բրուսիոյ արքայական սան երդն հնչեցուցին։

Հօէնձոլլերնի վրայէն Կայսերական դրօշը վար կ'առնուի, և ի տես այս նշանին, Հերթա և Հելլա կ'ողջունեն թընթանօթներով, երբ Գերման Կայսրն սաք կը կոխէ Օսմ. հողին վրայ. որոց անմիջապէս կը պատասխանեն Օսմ. թնդանօթները, Օսմ. Պահականաւէն և Ցօլմնոպաղչէի հրապարակի հրետանիէն։

Այդ միջոցին, Վ.Հ. Սուլթանն պեր-

شورای دولت رئیسی دولتلو سعید پاشا حضرتلری
Seine Excellenz, Saïd Pacha, President des Staatsrath
ԲԱՋՐ. ՍԱԻԴ ՓԱՇԱ.
Նախագահ Պետական Խորհուրդին

ճաշուք հանդիսաւորութեամբ Ծիրանեկիր, շրջապատուած զինուորական և քաղաքային աւագանեաց յոյժ փայլուն խմբով մը, կը յառաջանար դէպ ի Ծօլմա-Պաղչէի քարափն։

Երբ մակոյկը քարափին մօտեցաւ, Վ.Հ. Սուլթանը ձեռքը երկարեց Աւկուսթա Կայսրուհոյն. յետոյ Վիլհելմ Կայսրն դուրս ելլելով, դոհունակութեան արտայայտիչ ոգեւորութեամբ մը, երկու Ծիրանեկիր Վեհապետները զիրար ողջագուրեցին։

Վ.Հ. Սուլթանն իւր թեւն նուիրելով Աւկուսթա Կայսրուհոյն, և միւս կողմը ունենալով Վիլհելմ Կայսրն, շրջապատուած Արքայական Աւագանիէն դէպ ի Պալատ յառաջացան, ուր ընդունելութեան մեծ սրահին մէջ Կայսերական մեծարանքներով հիւրասիրուեցան։ Պահ մը հանդչելէ վերջ, Արքունի փառաւոր կառքերով և հեծեւորդներու շքեղ խմբով մը Եըլտըզի պալատն մեկնեցան։

Առաջին կառքին մէջ բազմած էր, Վ.Հ. Սուլթանն, իւր աջն ունենալով Աւկուսթա Կայսրուհին, իսկ դիմացը, Արտաքսաղեան բարձր. Մինիր փաշա։

Երկրորդ կառքին մէջ բազմած էր Վիլհելմ Կայսրն, իւր դիմացն ունենալով Բարձր. Մեծ-Եպարքոսն և Մարաշչախա Ֆուատ փաշա։

Իսկ երրորդին մէջ կը գտնուէին Դերմոնիոյ արտաքին գործոց Նախարար Մ.

شورای دولت ملکیه دائره‌سی اعضای کرامندن دولتلو طرخان
پاشا حضرتلری
Seine Excellenz, Turchan Pacha, Staatsrath
ԲԱՐՁՐ. ԹԻՐԽԱՆ ՓԱՇԱ.
Անդամ Պետ. Խորհրդոյ Քաղաքային բաժնի

տը Պիւլով և պատերազմական նախարար մարաջախտը։

Հեծելազօրքեր կը դանուէին Աբդուլի կառքերուն, և Ցօլմա-Պաղչէէն մինչեւ Եըլտըզի Պալատն դունդագունդ զօրքեր, մեծ պողպատային երկու կողմէն պատուարներ կը կազմէին։

Կայսերական Այցելու ամրոն առաջնորդուեցաւ յատակապէս պատրաստուած հայակապ Քէօշկին մէջ, որ կահաւորուած էր, Հէրէքէի Կայսերական դործարանի թանկագին կերպասներով պատրաստուած կարասիներով։

Վեհ. Սուլթանն իւր առաջին այցելութիւնը նուիրեց այդ Քէօշկին մէջ, ուրկէ վերջը Կայսրն և Կայսրուհին առանձին մեծային հանդիսանալու համար։

* * *

ԳԵՐՄԱՆԻՈՅ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԴԵՐԴԱՍՏԱՆԸ

Վիլհելմ-Ալպերտ-Ֆրէտերիք-Կիւցաւմ Բ. Կայսր Գերմանիոյ, Թագաւոր Բրուսիոյ, Պրանտընպուրկի Մարկրաւ (Սահմանակալ). Նիւռէնպէրկի Պիւրկրաւ (Քաղաքական կոմս), կոմս Հոէնձոլլերնի, Առաջին դուքս և Վեհապետ Կլացի կոմսութեան, Սիլէզիայի, Մեծ-դուքս Պա-Ռէնի և Բօղէնի, դուքս Սաքսոնիոյ, Վեսդֆալիայի, Բօմէռանիի, Անժէռնի, Լիւնէպուրկի, Հոլշթայնի, եւայլն, եւայլն։

Ծնած է Պէռլին, 1859 յունվար 27ին, (որդի Ֆրէտերիք Գ. Կայսեր, որ թագաւորած է իրմէ առաջ, և մեռած՝ 1888 յունիս 15ին)։

Գերմանիոյ զօրաբանակին ընդհ. զօրավար, Գերմանիոյ ծովային զօրութեան ընդհ. ծովակալ, զօրապետ՝ հետեւակազօր Ա. զօրագունդի, եւայլն, եւայլն Մեծն Բրիտանիոյ ծովային զօրութեան Պատուոյ Ծովակալ, Շուէտական Տորմիլլին ծովակալ, եւայլն, եւայլն, տէր և ինքնակալ Սեւ-Արծիւի աստիճանին, պաշտպան Սէն-Ժան աստիճանի, եւայլն։

برلین سفیرکبیری سعادتلو توفیق پاشا حضرتلری

Seine Excellenz, Tewfik Pacha, der türkische Botschafter in Berlin

ԲԱՐՁՐ. ԹԷՎՖԻԳ ՓԱՇԱ

Պէրլինի Օսմ. Դեսպան

Ամուսնացած է Պէրլինի մէջ 1881 փետրուար 27ին, ընդ ԱԻԿՈՒՍԹԱ-ՎԻԳԹՕՐԻԱ, Շլէզվիկ-Հոլշթայնի իշխանուհոյն, որ ծնած է 1858 հոկտեմբեր 22ին։

Կայսերազունք.

Ա. — Ն. Կայսերական և թագաւորական Բարձրութիւն Դահաժառանգ իշխան Ֆռէտէրիք-Կիյոմ, ծնած՝ 1882 մայիս 6ին, տեղակալ՝ հետեւակազօր Պահակագունդի Ա. գօրագունդին։

Ն. Թագաւորական Վսեմափայլութիւն իշխան Կիյոմ-Էյդէլ-Ֆռէտէրիք, ծնած՝ 1883 յուլիս 7ին, տեղակալ՝ հետեւակազօրայ առաջին պահակագունդին։

Գ. — Ն. Թագ. Վսեմափայլութիւն իշխան Առալդ, ծնած՝ 1884 յուլիս 14ին, տեղակալ՝ հետեւակազօրայ առաջին պահակագունդի, ծովային դեր-տեղակալ։

Դ. — Ն. Թագ. Վսեմափայլութիւն իշխան Օկիւսդ-Կիյոմ, ծնած՝ 1887 յունվար 26ին։

Ե. — Ն. Թագ. Վսեմափայլութիւն իշխան Օսկառ, ծնած՝ 1888 յուլիս 27ին։

Զ. — Ն. Թագ. Վսեմափայլութիւն իշխան Եոակիմ, ծնած՝ 1890 դեկտ. 17ին։

Է. — Ն. Թագ, Վսեմափայլութիւն, իշխանուհի Վիգթորիա-Լուիզ, ծնած՝ 1892 սեպտ. 13ին։

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ԲԱԺԻՆԸ ՀԱՅ ՏԱՆՏԻԿՆՈՋ ՀԱՄԱՐ

«Հանրագիտակ»ի պարունակութեանց շարքին մէջ գտնուած Առանին Ցնտեսութեան ճիւղին վրայ, Ձեռագիտութեան, Վայելչապարդութեան և կանայի Ձեռարուեստներու ճոխ մասնաճիւղ մ'եւս կ'աւելցնենք, մասնաւորապէս Հայ տիկնոջ և Օրիորդին, ինչպէս և կանայի ձեռարուեստներով լրենց տարուստը ճարողներու, ա՛լ աւելի շահեկան և օգտակար ընելու համար կը Հայացնենք, արտօնատիրոջ հետ համաձայնելով, ուշխարհիս մէջ ամենէն աւելի տարածուած «Լա Սէկոն» անուն կանանց պատկերազարդ թերթը, որ 13 տարբեր լեզուներով մէկ միլիոն օրինակէ աւելի կը հրատարակուի։ Այս կերպով ահա՛, Հայ ընտանիքներու տրամադրութեան տակ դրած պիտի ըլլանք «Հանրագիտակ»ի միջոցով, այդ թերթի ամբողջ պարունակութիւնը. ոա տարբերութեամբ որ, պատկերներու քովի բացատրութիւնները հայերէն պարզ և դիւրահասկանալի լեզուով պիտի ըլլան. և Լա Սէկոն Պոլիս հասնելէն 8—10 օր առաջ մենք



هوهنزولرن » واپورى
der Kaiserlich Yacht « Hohenzollern »
Հոէնզոլլերն Զբօսանաւ

արդէն հրատարակած և մեր բաժանորդներուն յանձնած պիտի ըլլանք. և արհեստական տեսակէտով կատարելութիւնը ապահոված ըլլալու համար, «Հանրագիտակ»ի այս նոր մասնաճիւղը կը յանձնենք, իր գործերով Հանրածանօթ արուեստագէտ Մ. Գալէնտէր էֆէնտիի։

* * *

Փափաքողք պէտք է դիմեն առ Ղ. Բուլատ, Տնօրէն-Խմբագրապետ «Հանրագիտակ»ի. — Էսկի-Զապթիյէ, թիւ 19։

* * *

Թէ ի՛նչ պայմաններով, «Հանրագիտակ»ի մէջ պիտի աւելցնենք այս կանանց Բաժինը. ահաւասիկ.

Որովհետեւ այսպիսի ձեռնարկ մը մեծամեծ ծախքերու կը կարօտի, և մեր արդի բաժանորդաց թիւն ալ հեռի է այդ ծախքերը գոցելէ, պիտի պարտաւորինք նոր բաժանորդագրութիւն մը բանալ, ապահով կերպով ճամբայ ելլելու համար։ 500 նոր բաժանորդներու պէտքն ունինք թէեւ, բայց եթէ առայժմ 300 նոր բաժանորդներ ունենանք, իսկոյն պիտի ձեռնարկենք այս նոր ճիւղին։

Ահաւասիկ բաժանորդագրութեան պայմանները։

«Հանրագիտակ»ի այժմու տարեգինին վերայ միմիայն 30 ղրուշի պզտիկ յաւելում մը պիտի ընենք. որ ըսել է 80 ղրուշի փոխարէն պիտի ստանան մեր բաժանորդները, թէ «Հանրագիտակ»ի հիմակուան պարունակութիւնը, և թէ Լա Սէզոնի Վայելչազարդութեան Հայերէն թերթը։

Արտասահմանի համար տարեգինը պիտի ըլլայ 20 ֆրանք։

Միմիայն Վայելչազարդութեան բաժինը ուզողներուն, տարեկան 60 ղրուշ Պոլսոյ և Գաւառներու համար. իսկ արտասահմանի համար 16 ֆրանք։

Մեր արդի բաժանորդներէն անոնք որ կը փափաքին Վայելչազարդութեան այս նոր բաժինն ալ ստանալ, պէտք է տարբերութիւնը վճարեն։

Վերոյիշեալ պայմաններէն դուրս, տարեկան 30 ղրուշի յաւելումով մ՚ալ պիտի տանք մեր բաժանորդներուն 36 մեծադիր և գունաւոր աքանչելի կերպով նկարուած պատկերներ, որոնք պիտի ներկայացնեն կանանց, օրիորդներու, մանուկներու և պատանիներու նորաձեւ հագուստներ, գլխարկներ, եւայլն։

Իսկ ամիսը անգամ մը թերթիս մէջ պիտի տրուի իրանազգեստի, չրջազգեստի, վերարկուի, մեկնոցակներու, ճերմակեղէններու, եւայլն տիպարներու այլազան օրինակներ, զորս ընական մեծութեան վերածելու համար, չափական և համեմատական դրութեամբ բացատրութիւններ պիտի տրուին։ Անոնք որ հետեւած են ցարդ Լա Սէզոնի «յաւելուածին» մէջ պարունակուած տիպարներու ընդօրինակութեան, դիտեն թէ որքան դժուար է զայնս ուսուցանել անձի մը իսկական չափերուն վերածելու, այս կէտն է որ Գալէնտէր էֆ. վերը յիշուած իր դրութիւններով ամենուն դիւրահասկնալի պիտի դարձնէ։

Եւ երբ մեր այս նոր ձեռնարկին մէջ պէտք եղած քաջալերութիւնը գտանք, և նոր բա-

ժանրդաց թիւն 500ը անցնի, այն ատեն ալ «Հանրագիտակ»ի ներկայ ծաւալը կիսով չափ մեծցնելով, ընդարձակ տեղ մը պիտի տանք գրական ճիւղին, հրահանգիչ մանրամասնեալ, բանաստեղծական գրութեանց, դիտողական ժամանցներու, եւայլն, եւայլն։

Բաժանորդագրութիւնը այժմէն բացուած ըլլալով, հրաւէր կը կարդանք բոլոր Պոլսեցի և Գաւառաբնակ Հայ ընտանեաց։ Անոնք որ կը փափաքին բաժանորդ արձանագրուիլ, թող հաճին մեզի թերթիս կողքին վրայ գտնուած հաւանութեան դիրը ստորագրել և մեզ զրկել, կամ եթէ կուզեն զատ նամակաւ։ Եւ երբ նոր բաժանորդաց թիւը 300ը լրանայ, այն ատեն բաժնեգնոց դանձումը պիտի սկսին, և իսկոյն թերթը պիտի հրատարակենք (*)։

Դ. ԲՈԼԱՏ

ՄԱՏԵՆԱԴԱՏԱԿԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ՈՒ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՄԷԿ ԲԱՆԻ

ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԱՏԱՍԽԱՆ ԱՌ ՏՈՔԹ. Ն. ՏԱՂԱՒԱՐԵԱՆ

Խոստացած էի թէեւ Յարգելի բարեկամս Տքդ. Տաղաւարեանի Առողջաբանութեան մասին կատարած ուսումնասիրութիւնս շարունակել, բայց իր տուած պատասխաններուն մէջ կրկնակի և ակներեւ սխալներ գտնուելուն, պարտք համարեցի նախ զանոնք ուղղել, և ապա շարունակել։

Հետեւելով միշտ գիտնականներու խորհուրդին և լեզուաբանական օրինաց, երբ նոր բառ մը շինել պէտք ըլլայ, ենթակային սեւ էմէկ պատայայտիչ յատկութեան վրայ հիմնելու է զայն, որպէս զի արտաքանական ըլլայ։ Ահա այս պատճառաւ առաջարկած էի cubutusին հայերէն «արմոկը» ըսել, ինչ որ «կուրծքին» չպիտի նկատէր Յարգելի Տոքդորը, եթէ տուած բացատրութիւնս պաղպրիւնով կարդացած ըլլար։

Մասներու ոսկորներու մասին գրածներս, մեր լեզուի հիմը կազմող Հայկազն. Բառարանէն քաղած ըլլալս արդէն նոյն յօդուածին մէջ բացարձակօրէն գրած եմ. և Յարգոյ Տոքդորը թերեւս չափազանց յանգամով մը սխալ սեւած ըլլալու է, իւ յիշած կարգ մը բառարաններուն մէջ ալ. վասն զի՝ անոնց հեղինակները քաջ հայագէտ ըլլալով, «կոճ» բառին նշանակութիւնը ալէկ գիտեն։

Խաչակ բառին համար ինչ որ ըսած եմ նախորդ յօդուածով (*), ընթերցողները կրնան բաղդատել Յարգոյ Տոքդորին տուած բացատրութեան հետ, և եզրակացնել թէ սրը՝ կուրծքէն արդեդրուած է, և որը՝ տրամաբանօրէն շինուած, յարմար և արտայայտիչ է։ Բայց անոյշակի չի մտանանք ըսելու թէ, գրաբարի մէջ «սրունք» բառի սեռական հոլովը «սրունից» կամ «սրուանց» կ'ըլլայ, և ոչ թէ «սրուան», ինչպէս կը կարդէ Տոքդ. Տաղաւարեան. որովհետեւ սրունք բառը անեզական է։

Շնչափող բառը համանիշն է խաչափողի (տես Հայկազն. Բառարան). մեր տարակուսիւնը արդէն ոչ թէ շնչափող՝ այլ «հաղագ» բառին վրայ էր. բաղդատեցէք։ Կոկորդը pharynx) ոչ թէ խաչակի եաեւը կը գտնուի ըսած եմ, այլ հաղագի՝ որ խաչակէն վեր է։ Կը ցաւիմ որ, Տոքդ. Տաղաւարեան անուշադրութեամբ կարգացած է յօդուածիս այդ մասն ալ, և փոխանակ իմ հարցումներուս ուղղակի պատասխանելու, ոլորտոյտ ճամբաներով կարծեր է սխալ մը գտնել հոն։

Կոկորդ բառի անարաշ ըլլալն՝ Հայկազն. Բառարանը կը հաստատէ. և քանի որ իր տուած բացայայտ տեղեկութիւններով զայն pharynx բառին համապատասխան կը գտնենք, ալ ի՞նչ հարկ կայ ասդին անդին իյնալ, և նոր բառ շինել, և նեղը մնացած տեղերդ ալ կրկին և կրկին անգամներ անոր գիմել (երես 32.... Կըսեմ կանուանեմք սննդոց բերանէն մինչեւ ցորկորն հասնիլն. կըսան պահուն՝ քիթի «կոկորդի» հետ ունեցած հաղորդակցութեան անցքն...։ Սննդական գնտակն որ լեզուի մէջտեղի «կոկորդն» հասած էր...). Նոյնպէս (երես 468)ի մէջ, եւայլն։ Ո՛րն է և ո՛ւր է հիմա ըստ ձեզ կոկորդ։ Հակասական չէ՞ք գտներ։

Նոյնը կը կրկնեմ նաեւ որկոր բառին համար. վասն զի՝ Հայկազն. Բառարանը զայն նուիրագործած է, և դո՛ւք, իրաւունք չու-

(*) Հաճեցէք կարդալ թերթիս կողքին 3րդ երեսի պարունակութիւնը,

(*) Տե՛ս Բիւզանդիոն, թիւ 587։

նիք Սիրելի Տոքդոռս, լեզուին հիմերը խախտելու ձեր բանասիրական սկզբունքներով։ Մեր լեզուի թանկագին գանձը եղող այդ Բառարանը յօրինող Հայրերը, բազմահմուտ, բազմալեզուագէտ, լուրջ և խոհուն անձնաւորութիւններ էին. և մեզմէ շատ աղէկ մը տուած գուած էին թէ՝ ո՛րն է որկորդ, և որն է ստամոքսը։ Այս մասին ձեր տուած օրինակներով արդէն ծայրայեղ հակասութեանց մէջ կ'իյնաք, Սիրելի բարեկամս. որովհետեւ ժողովրդական ասութեանց մէջ անգամ «պօղպաւէր, պօղպաղ թօքլուղընա», եւայն, եւայլն բառերը կը գործածեն, փոխանակ «ստամոքսաւէր» կամ «միսէ...աւէր, «միսէ թօքլուղընա» բառերուն։ Հետեւաբար, ձեր ներկայացուցած բառերն, այդ տեսութեան ապացոյցները չեն կրնար ըլլալ։

«Ֆիլէթօ» բառին՝ գաւառացիք «թընթզուկ» կ'ըսեն շատ տեղեր, որ ձեր հաստատել ջանացած «ան ուշբերդ» բառէն աւելի սրբամաքրանօրէն ինուած է. ինչո՞ւ գիտէ՞ք. որովհետեւ այդ միսը իր կակղութիւնով «դոնդող»ի նմանութիւն ունի. այս բառն ալ լրջօրէն բաղդատեցէք «դողդոջել, դողդող», եւայլն բառերուն հետ։ Բաղդատեցէք նոյնպէս Մալաթիոյ գաւառաբարբառին հետ, ուր կը կոչեն «դանդաղ» միս։

Գանք ձեր հնարած «երկոտասանամատնեայ».... բառին, որու համար բառական թարգմանութիւն մ'է կ'ըսէք. բայց իբր բառական թարգմանութիւն սխալ ըլլալը արդէն նախորդ յօդուածով ապացուցած եմ. երկրորդ՝ Սիրելի Տոքդոռս, ինչո՞ւ այդչափ կը բորբոքիք, և առանց լրջօրէն մտածելու, մէկէն ի մէկ հրապարակաւ անտեղի վարմանց մէջ կը գտնուիք, ձեր 25 տարուան դասընկերոջ և ճշմարիտ բարեկամին դէմ։ Կ'ըսէք թէ, մարդիկ «խախտոց» չունին։ Իրօք ալ այնպէս պէտք է ըլլալ. բայց դո՛ւք խորհուրդ տուած չէի՞ք ինձի որ, գործածելիք բառերս «խնամք» ընտրեմ։ Արդ՝ մտածելով որ, այսպիսի խորհուրդ տուողմէկը հարկաւ ընտրանօք կը գործածէ իր բառերն, պարզապէս ձեր օրինակին հետեւեցայ (երես 32... Բառատարրեան մարմիններն՝ «խախտոյային» դեղէից «խախտոյտ» կամ մակարդ անուանեալ մի մարմնոյ միջոցաւ՝ մարսելի վիճակի կը վերածուին...). և այս բառը գործածած էք մէկ քանի անգամներ։ Հիմա ես ալ երկրայութեան մէջ մնացի թէ՝ արդեօք մարդիկ խախտոց ունի՞ն թէ ո՛չ. և թէ այդ գործողութիւնը ո՞ւր, և ստամոքսին ո՛ր մասին մէջ կը կատարուի։

Ձեր յօդուածով «ման» և «սեր» բառերու մասին տուած սահմաններդ շատ կը տարբերի Առողջապահութեան մէջ գրածներդ. և ինչ որ ալ ըլլայ, մէկին հուժ՝ միւսին եփած սեր կ'ըսեն. և «ման» բոլորովին տարբեր նշանակութիւն ունի ըստ Հայկազն. Բառարանի։ Կարագներու մասին ձեր գրածներուն թէեւ օգտաչատ «Բիւզանդիոն»ի Յարգելի Խմբագրատեսը պէտք եղած պատասխանը տուած է, բայց կը ներէ անշուշտ որ, գիտական և արհեստական տեսակէտով ալ մենք պատասխանենք հոս։

Մածունէն պատրաստուած կարագը, սերէն պատրաստուածէն աղէկ չըլլալը հաստատելու համար, իմ անձնական փորձառութիւններս պահ մը մէկ կողմ դնելով, կը յանձնարարեմ ձեզ իսկայն ուսումնասիրել, ի միջի այլոց, Բեռնիէսէօ Բուռիսի Լա Լէթըռի անուն գիրքը(*)։ Մածունէն պատրաստուած կարագը նախ թթու կ'ըլլայ, յետոյ ծթգելով կը կծունայ, և շատ պանրիտ և չիճռէկ կը պարունակէ իր մէջը, և երբ տաքցնելով հալեցնէք, այն տակեն բոլոր այդ օտար նիւթերը փըրփուրի ձեւով երեսը ելլելով, կարագէն կը զատուին, և այս վերջինն ալ «անարատ» կը մնայ։ Այս պատճառաւ ահա, արդար իւղ կը կոչեն զայն, բայց ո՛չ թէ ազատ։ Այս բացատրութիւնն ալ տրամաբանօրէն չէք գտներ։

Իսկ մաքիներու (ըստ ձեզ ոչխարայ)(**)

(*) Այս պարբերութիւնը՝ պատասխան է նաեւ Մելքոն էֆ ի ձախող փաստաբանութեան (Տես Հէփաեէի Շարդիկ, թիւ 4030)։ Բայց մենք կը կարծենք թէ։ այսչափ տարիներէ ի վեր, Մելքոն էֆ. զէթ գործնական փորձառութիւններով սորված ըլլալու էր այս ճշմարտութիւնը։ Եւ ի՞նչ հարկ, Սիրելի Մելքոն էֆ. Տոքդ. Տաղաւարեանի դատը պաշտպանելու համար, ժողովուրդին սխալ վարդապետութիւններ ընել։ Հրապարակագիր (?) մը պէտք է լուրջ և ուղղամիտ ըլլայ։

(**) Բազմահմուտ դասընկերս ուրո՞ւ երկրին մէջ ոչխարը կաթ կուտայ։ Մինդավայրի՛դ Զմշկածակ, կը յիշէք, բայց դպրոցական դասերնի՞ղ...։ Բայց տեսնենք, գո՛ւք երբ սորվեցաք Մելքոն էֆ. շահաբրամէն (ֆուրէնֆէլ) իւղ հանել և ուտել, որ ձեր երկրագործի փկայականով կ'ելլէք ձախողդատի մը ձախաւէր փաստաբանը կը կանգնիք, բազարձակ վճիռ տալով թէ,

կարագը կովերու կարագէն «գերընտիր» չըլլալը հաստատելու համար, կրկին կը յանձնարարեմ ձեզ և Մելչան Էֆ.ի ուսումնասիրել կաթնաբանութեան վրայ գրուած բոլոր գրքերը՝ առանց բացառութեան։ Եւ ասոնցմէ զատ, իմ անձնական երկարատեւ փորձառութիւններս ունիմ, որոնք անսխալ ապացոյցներ են ձեռքիս մէջ։

Ի միջի այլոց, Զիփթէլէր չիփթլիկի Կայս. Ասպաստանի մէջ 9 տարիներ առաջ պաշտօն վարած ատենս, հաստատած եմ կարագ շինելու կեդրոնախոյս դրութիւնը՝ անշուշտ բերել տալով այդ դրութեան վերաբերեալ գործիքներ։ Ասպաստանը ունէր այն ատեն 30000 ի չափ մաքիներ, 200ի չափ կաթնատու կովեր, և 100ի չափ ալ գոմէշներ։ Կրնաք հասկընալ թէ, կամ արտադրող այսչափ բազմաթիւ կենդանիներ և միջոցներ երբ հողագէտի մը տրամադրութեան տակ դրուին, ինչ փորձեր չի կրնար կատարել։ Վսեմ. Մուզաֆֆէր փաշայ, Ընդհ. Տեսուչ Կայս. Ասպաստաններու, փափաքելով մեծաքանակ կարագ արտադրել և արտածել, հրաման տուած էր ինծի, առանց բացառութեան բոլոր արտադրուած կաթերը կարագի վերածել. թէեւ խոնարհաբար նկատել տուած էի առաջին անգամ թէ, մաքիներու կաթէն պատրաստուած կարագը շատ մը կը ծախի, կը կծուանայ, և թէ կովու կարագէն տարին կ'ըլլայ. ինչ որ հաստատուեցաւ փորձով, և քիչ վերջը մաքիներու կաթը ամբողջովին պանիր շինելու սահմանեցինք։ Երկրորդ՝ Բարձր. Արրահամ փաշայի ագարակը առաջին անգամ ըլլալով, հաստատած եմ կրկին, կեդրոնախոյս դրութեամբ կարագի գործանոց մը, ուր պատրաստուած կարագը մեծ համբաւ հանած է Պոլսոյ մէջ, և գնահատուած բոլոր high life էն, քիլօն ծախուած է մինչեւ 60 ղրուշի, իսկ այժմ կը ծախուի 40ի։ Հողագէտ մը ասկէ աւելի ուշ դեղագիր չի կրնար պատրաստել Սիրելի Տոքդուռ։ Երբեմն հոն մածուն պատրաստած եմ, որու «քեասէն» 30 ղրուշի ծախուած է, որ հիմա կրնար ձեր յուզումը և բորբոքումը հանդարտեցնել։

Բարձր. Արրահամ փաշայի ագարակներն, ինձ համար փորձառական դպրոց մ'եղած են, ուր անընդհատ կատարած փորձերուս շնորհիւ, և իմ տրամադրութեանս տակ դրուած ճոխ մատենադարաններու մէջ կատարած ուսումնասիրութիւններովս, ձեռք բերած եմ ըստ կարելւոյն այնպիսի հմտութիւններ, զորս՝ իրր մեծաշնորհ միմիայն ձերը ըլլալ կը կարծէք բարեմտօրէն, Սիրելի բարեկամս. և կը յանձնարարէք ինձ, նոյնպէս միամտօրէն, ձեր ուսուցիչը ըլլալս պատիւն ունեցող Բռոֆ. Սանսոնի գործերը թղթատել։ Սակայն այդ ուսումնասիրութիւններ կը կատարէի ես ճիշտ այն ատեն, հա՞րկ է ըսել թէ, երբ Ց. Ց. Պարոնեան, Խիկարի մէջ դաս կուտար ձեզի(*)։ Անցնինք մեր խնդրոյն սակայն։

Ունդազգիներու պարբերութեան մէջ (2) գիրը տպագրական սխալ չէ, (երես 85... և կամ շատ եփելու են կրաքար (carbonate (de chaux) պարունակող ջուրց մէջ, որով կեղեւին կը կակուղնայ...)։

Կաղամբ, ծներեկ, եւայլն ընդեղէն չեն. ինչպէս կ'ուզէք հաստատել. ընդեղէն են՝ լոբիա, բակլայ, սիսեռ, եւայլն։ Լաւ աչքէ անցուցէք բուսաբանութեան գրքերը, որ համոզում գոյացնէք։

Պտուղներու մասին տուած պատուէրնիդ աւելորդ է. մենք աւելի կ'սպասէինք որ, ձեր մանրէագիտութիւնով զգուշացնէիք ժողովուրդը՝ անլուայ պտուղ ուտելէ. թէեւ առանց ձեր խորհուրդին, և առանց մանրէաբանութիւն կարդացած ըլլալու, ժողովուրդը ինքնաբերաբար այդ նախազգուշութիւնը ի գործ կը դնէ(**)։

Խորվեալ մսերու մասին ալ գրածնիդ ակ-

Տոքդ. Տաղաւարեանի Առողջապահութեան գրքին մէջ։ Երկրագործութեան հետ առնչութիւն ունեցող մասերը բնաւ երբէք սխալ չեն։

(*) Այս տողերը կը գրենք անցողակի, միայն ձեզ յիշեցնելու համար այդ դասերը, զորս եթէ մոռացած եք։ կրնաք վերստին սերտել։

(**) Զէինք կարծեր որ Տոքդ. Տաղաւարեանի մանրէներն իշամեղուներու չափ խոշորնան պտուղներու մէջ։ Վասն զի՝ վերջապէս, երեւակայեցէք անգամ մը։ Ապիւ ընթերցողներ, տանձի, խնձորի և մանաւանդ դեղձի և ծիրանի մեծութիւնը, երեւակայեցէք նոյնպէս իշամեղուի (անշուշտ՝ մեր հասկցած հայերէնով, ըսել կ'ուզեն, Տոքդ. Տաղաւարեան և Սուքիասեան Մելքոն էֆ.ք՝ էլէ+ արբոը) մը խոշորութիւնը, և հիմա փորձեցէք պնդել թէ, այդ պտուղներու մէջ իշամեղուներ կրնան պահուըտիլ, որ կերուած ատեն բերանը խայթեն, և այնպիսի ուռեցք մը յառաջ բերեն, որ մարդ քիչ ժամանակէն հեղձամահ ըլլայ...։ Երանի՜ հաւատացողին. Սիրելի Մելքոն էֆենտիս։

ներու հակասութիւններ են. հասկցողը կը հասկնայ, հարկ չկայ երկարաբանութեան։ Իսկ դալով ձեր վերջի պարբերութեան, ձեր ամենէն մեծ սխալը հոն էր որ, իրը դատաղիրք սահմանած մէկ դործերնիդ, անտարբերութիւնով անկարդներու յանձնած էք արդարութեան համար, ինչպէս կ'ըսէք, ձեր յողուածի վերջաւորութեան մէջ։ Եւ կ'երեւի թէ, այս անդամ ալ ճմլոդ դուդալիութեամբ, ձեր դատի պաշտպանութիւնը կը յանձնէք, ճարահատեալ, Սարքիսեան Մելքոն էֆ.... որ Ֆէնելոնի ծանօթ առակին մէջ դանուած Ագուտին պէս, օտար թռչնոյ փետուրներով զարդարուած.... հրապարակ կը նետուի, և..., բայց մեր խնդիրը։ Եւ եթէ Պատ. Ուսումն. Խարհուրդն ալ լաւ աչքէ անցուցած ըլլար, հաւատացէք որ այդչափ ջերմարկն չը պիտի յանձնարարէր զայն իրը դատաղիրք։ Հրատարակուած գրքի՞մը մասին կատարուած քննութիւն մը ժողովուրդին իրաւունքն է, զոր կը պահանջէ իր հրապարակագիրներէն, և աւելի իրաւունքով երբ այդ հրատարակութիւնը իրը դատաղիրք կը վաւերացուի, և կ'արտօնուի։ Եւ կը ծանրանամ իրաւունքով այս կէտին վրայ, որովհետեւ՝ վերջապէս Տոքդ. Տաղաւարեան իր աշխատասիրութիւնով հանրութեան օգտակար հանդիսանալ կը փափաքի, և հանրութեան մէջ ալ կը դտնուի անշուշտ իրեն համակիր մաս մը, որ այդ օրինակ թերութեանց աչք դոյել կուդ. հաճոյակատարութեամբ, և այդ մասն ալ կրնայ զարդացեալ դատակարդին պատկանիլ. բայց դպրոցներու համար այնպէս չէ։ Անոնք որ կը կարծեն թէ, մենք Տոքդ. Տաղաւարեանի հանդէպ հակակրութիւն մը կը սնուցանենք, շատ կը սխալին. մենք անձնականի հետ դործ չունինք, և արդէն ոչ թէ Տոքդ. Տաղաւարեանի արժանիքը քննադատած ենք, այլ իր Առաջնորդութիւն անուն նոր հրատարակութիւնը, որ թարդմանութիւն մ'է անշուշտ, և դիտական տեսակէտով ամէն սխալ, կը վերադրուին մատեանը հեղինակին, եթէ կուզէք. բայց եթէ ուզուի որ, սխալ վարդապետութիւններ ծափահարելով ընդունուին, մենք կը լռենք մեր վերջին բառը արտասանելով. e pur si muové։

Ղ. ԲՈԼԱՏ

ՀԱՐՏԱՐԱՐԱԿԱՆ

ԹԷ Ի՞ՆՉՊԷՍ ԿԵՐԱԿՐԵՂԷՆՆԵՐԸ ՏՈՒՓԵՐՈՒ ՄԷՋ ԿԸ ՊԱՀԵՆ

Պատասխան թիւ 42րդ հարցումին

(Շարունակութիւն տե՛ս թիւ 31)

Բուսեղէն սնունդները երկար ատեն անվնաս պահելու համար, կարդ մը կարեւոր պայմաններ կան, որոնց պէտք է ուշադրութեամբ հետեւիլ։ Ըստ բուսական հատուածքներու կարդաւորութեան։ մաքուր, առանց վիրքի, և ոչ ալ ճմլուած ըլլալու են. պէտք է զանոնք քաղել առաւօտները կանուխ, երբ օդը չոր է, և երբէք քաղուած տեսնը, արեդակին տակ չի թողուր, և պարտէզին դուրս հանուելուն պէս, խիստ պահպանման դործածութեան ձեւանարկել։ Կարելի եղածին չափ դդուշանալու է շուկաները ծաւռուած բանջարեղէններէ դնելէ, որովհետեւ չէք դիտեր որ, ե՞րբ քաղած են զանոնք։ Օր մը առաջ քաղուած բանջարեղէնները, հետեւեալ օրուան երբ մնան կը թուլնան, կը բորբոքին, և հետեւարար ալ անյարմար կ'ըլլան պահուելու։

Անդեղէն նիւթերը կարուին, օդի խոնաւութեան, տաքութեան և մանաւանդ՝ անհունատէս փոքրիկ արարածներու, այսինքն՝ մանրէներու (միքրոպ) ազդեցութեամբ։ Այս մանրադիտակային փոքրիկ արարածները, կը դանուին զմեզ շրջապատող օդին, կամ նոյն ինքն մեր սնունդներուն մէջ. որոնք՝ երբ նպաստաւոր պայմաններու մէջ դտնուին, խիստ սերնդաւորելու կ'սկսին. այս նպաստաւոր պայմաններն ալ, ինչպէս վերը ըսինք, օդը, խոնաւութիւնը և տաքութիւնն են։

Երբ տեղւոյն տաքութեան տասիճանը բարձրանայ (ամենէն նպաստաւոր տաքութիւնը 15 հարիւրորդի — տասնիկրատ — տասիճանն է), երբ, նոյն ատեն օդը փոխարկելոյ կամ խոնաւ է, այդ մանրէները շարժման մէջ մտնելով, իրենց արտադրած կըզկանքներով, քիմիական հակազդեցութիւններ յառաջ կը բերեն, և այսպէսով սննդական նիւթերը կը խանարեն, և հետզհետէ բաղադրութեամբ, կը նեխեն զանոնք։ Առաջին անդամ ըլլալով, մեծանուն Բասթէօր, փոր-

ձով հաստատեց այս իրողութիւնը. թէ յորինուածաւոր մարմիններու խմորումը յառաջ կուգայ, անհունապէս փոքրիկներու ներկայութենէն, երբէք այդ մարմիններու ներքին և ինքնաձին աշխատութեան մը արդիւնք չէ, ինչպէս կը կարծուէր հին ժամանակները. և թէ այդ մանրադիտային էակները օդին մէջ կը գտնուին, և անկէ յորինուածաւոր մարմիններու վրայ կը տարածուին, կը քայքայեն, կը բաղաղուածեն զանոնք, իրենց սնունդը յառաջ բերելու համար, և այսպէս հետզհետէ կը բազմապատկին իրենք ալ, մինչեւ որ մարմինը ամբողջովին ապականի, քայքայի։ Փորձը շատ դիւրին է կատարել. կը բաւէ միայն, ամենէն աւելի նեխամէտ (հոտելու տարողիր) մարմինը, օդի մէջ վխտացող մանրէներու ազդեցութենէն ապատել սեւէ կերպով. և ահա այդ մարմինը ընդ երկար պիտի դիմադրէ ամէն խմորումի։ Նոյնպէս, ամէն նեխամէտ մարմին յատուկանապէս անեղծ կը մնայ, փոշիներէ և մարմնիկներէ զերծ, անոթաս օդի մէջ։ Մ. Բաստէօռ երկար տարիներ անվթար պահած է, ապակիէ շիշերու մէջ, արիւն և մէզ, որոնք ամենէն աւելի նեխամէտ մարմիններ են։ Այդ շիշերու օդը մաքրած էր ամէն տեսակ մանրէներէ, որոնք՝ ինչպէս ըսինք, միակ պատճառներն են յորինուածաւոր մարմնոյ խմորման։

Ուրեմն՝ առանց մանրէներու ներկայութեան, խմորում յառաջ չի գար, և այս կերպով ալ աննդեղէն նիւթերու պահպանման խնդիրն ալ ճշդօրէն լուծուած կը պատկերանայ մեր առջեւ։ Նեխամէտ մարմիններ երկար ատեն անվթար պահելու համար, պէտք է և կը բաւէ. 1. Այդ նիւթերը մաքրել իրենց վրայ գտնուած նեխիչ սերմերէն. 2, Պահել զանոնք, բացարձակապէս մանրէներէ զերծ մթնոլորտի մը մէջ։

Բայց ի՞նչպէս գործադրել այս պայմանները։ Այդ մարմինները մտերջացած (stérilisé) օդի մը մէջ պահելու համար, շատ միջոցներ մարդս կրնայ խորհիլ անշուշտ. զոր օրինակ՝ երբ 250—300 աստիճան տաք օդ մը ներմուծենք տաններու մէջ, բնական է որ, այդ օդի մէջ գտնուած ամէն տեսակ նեխիչ սերմեր սպաննուած պիտի ըլլան, որով և օդը անկարող պիտի ըլլայ խմորում յառաջ բերելու. բայց Մ. Բաստէօռ շատ անգամներ աւելի դիւրին և նախնական միջոցի մը դիմած է, և յաջողած է կատարելապէս։ Այսինքն՝ իր ապակեայ շիշերը պարզապէս զտեալ օդով լեցուցած է. և օդը զտելու համար, շիշերու վրայ հաստատած է մէջը բամպակով լեցուն ապակեայ խողովակներ։ Բամպակը՝ օդին մէջ գտնուած բոլոր փոշիները և մանրէները կը կեցնէ, և այսպէսով միմիայն անարատ օդ կ'ինկնայ շիշերուն մէջ։ Ահաւասիկ միջոց մը, որ շատ անգամներ առօրեայ շատ պէտքերու մէջ օգտակարապէս կրնայ շահագործուիլ։

Սնունդները երկար ատեն պահելու միջոցներուն գլխաւոր մասին վրայ այսչափ հակիրճ տեսութիւն մ'ընելէ վերջը, անցնինք գործնականին այժմ, որ ամենէն աւելի ընդհանրացած գրութիւնն, Արկ. անուն Գրանսացի ճարտարագէտին հնարածն է, և հաստատուած է հեռաւոր հիման վրայ։ Պահելու սահմանուած սնունդները լեցնել մանաւոր տուփերու մէջ, զոր նեխիչ մանրէներու ազդեցութենէն զերծ պահելու համար, տաքութեամբ այդ մանրէներու սերմերը ոչնչացնել. յետոյ տուփերը տիրապէս գոցել, որպէս զի՝ նոր մանրէներու սերմեր չի կրնան ներմուծիլ։

Գրութիւնը շատ պարզ, և ամէն մարդու համար ալ գործադրութեան եղանակը դիւրամատչելի է։ Մեծածախս գործիքներու կամ մեքենաներու պէտք չի կայ, և քիչ մը վարժութեամբ կարելի է յաջողիլ։

Գլխաւորաբար ապակեայ շիշերու և անագաղօծ երկաթեայ թիթեղ տուփերու (թէնէք) մէջ կը պահեն սնունդները։ Ապակեայ շիշերը սեւէ նախնական պատրաստութիւն չունին. ուստի խօսինք թիթեղէ տուփերու պատրաստութեան վրայ։ Այս տուփերը կ'ըլլան սովորաբար գլանաձեւ, երբեմն ալ պահուելիք նիւթերու ձեւին համապատասխան, տափակ քառանկիւնաձեւ, հաւկիթաձեւ, եւայլն։ Տուփերու պատրաստութիւնը անշուշտ թիթեղագործներու կը պատկանի, և դիտեն անոնք թէ, ի՞նչ եղանակներով դիւրութեամբ կը պատրաստուին այդ տուփերը։ հոս միայն օգտակար կը սեպենք յիշեցնել թէ, այդ տուփերը փակցնելու համար պէտք չէ գործածել ջրաքլորային թթու (թուղ բուհու), այլ բաւականանալու է միայն «սբարմաշէթ» քսելով։ Եթէ դիւրութեան և արագութեան համար անպատճառ ջրաքլորային թթու գործա-

ծել հարկ ըլլայ, պէտք է փակցուելէն անմիջապէս վերջը կաւիճի փոշիով մաքրել ուժգրնապէս, լուալ և չորցնել, որպէս զի ամէն օտար հոտերէ զերծ մնան տուփերը։ Իսկ երբ մեծաքանակ պատրաստութեանց համար հաղորդաւոր տուփեր հարկ ըլլայ, այն ատեն պէտք է թիթեղագործութեան վերաբերեալ կարգ մը մեքենաներ գործածել, կանոնաւոր, ածան, շատ և ամէնը մէկ չափի վրայ պատրաստելու համար։ Թիթեղները ժանգոտած ըլլալու չեն, և այնչափ ուշադրութեամբ և աղէկ փակցնելու է որ, ամենափոքր ծակ մը անգամ չի գտնուի։

(Շարունակելի)

Ղ. ԲՈԼԱՏ

ՄԵՂՈՒԱԲՈՒՄԱԿԱՆ

ՉԷՋՈՔ ՄԵՂՈՒՆԵՐԸ

Փեթակի մը մեղուներուն ամենէն օգտակարներն են «չէջոք մեղուներ»ը ու գրեթէ միակ աշխատաղները։ այս պատճառաւ է անշուշտ որ կը կոչուին «Գործաւոր մեղուներ» կամ «Գործաւորուհիներ»։

Թեւերնին միջակ, մարմիններնին ծածկուած է ոսկեմազերով, գլուխնին եռանկիւնաձեւ։ գլխուն վրայ երկու ցցուած խոշոր աչքերէ զատ, ճակատին վրայ ալ փոքր աչքեր ունին, այնպէս որ իրենց տեսողութիւնը շատ կատարեալ է։ Երեք ոտք ունին՝ հինգական յօդերէ բաղկացած, որոնց երրորդ յօգերու ներքին մասը «վրձին»ի մը կը նմանի։ այս «վրձին»ը կը ծառայէ ծաղկոնց սերմնափոշին ժողվելու, և կամ մեղուն անով իւր վրայ կը մաքրէ։

Վերջին ոտքերու դուրսի կողմը կը գտնուի «կողով»ի նման խորութիւն մը, ուր մեղուն կը հաւաքէ բեղմնափոշին ու ականամոմն (propilis)։ Գործաւորուհիները միւնոյն փեթակին պատկանող մեղուները կը պաշտպանեն, բայց իրենց խայթոցներով պաշտօն ունին օտար մեղուները ջնջելու։

Այս չէջոք մեղուներէն ոմանք մեղր կը ժողվեն կամ մոմ կը պատրաստեն, ուրիշներ նորածիններուն կը խնամեն ու կը կերակրեն, ուրիշներ բնակարանը (փեթակ) կը մաքրեն, կը հովհարեն կամ թշնամիի մը յարձակման դէմ կը պաշտպանեն. ասոնց իւրաքանչիւրին վրայ քիչ մը պիտի խօսինք։

ՄՈՄԱՐԱՐՆԵՐԸ. — Փոքր չէջոք մեղուներ են՝ որոնք պաշտօն ունին փեթակին մեղրախարիսխները չինելու. մեղրախարիսխները պիտի ընդունին մայր մեղուին ածած հաւկիթները կամ մեղրը, որ մեղուներու ձմրան պարէնն է։ Մոմարարները իրենց փորի օղակներուն տակ ունին մոմ արտադրող գեղձեր, այսինքն՝ ատենդանման մարմիններ, որոնք նիւթ մը կ'արտադրեն. այս նիւթը կը կոչուի «մոմ» կամ աւելի լաւ է ըսել «մեղրամոմ»։ Մոմարարները այս նիւթով կը չինեն վեցանկիւնաձեւ ջիջեր, կազմած մը որ՝ «խարիսխ» կը կոչուի. այս խարիսխները «մեղրախորշ» կը կոչուին եթէ մեղր պարունակեն, իսկ «ձագարան» եթէ մայր մեղուն իւր հաւկիթները հոն զետեղած է։

Մոմարար մեղուները իրենց սնունդը կ'առնեն բոյսերէ. այս սնունդը մարմնոյն մէջ հրկան կ'ընէ ու վերջապէս անկէ մաս մը փարին մէջ կը ժողվուի. մեղուներն ալ իրենց ոտքերուն շնարհիւ մոմը գեղձերէն դուրս կը հանեն, բերաններն կը տանին ու կ'սկսին իրենց յատկացած բնավայրին ձեղուն ջիջները չինել. եթէ մեղրամոմը հատնի, շատ մը թռի կ'երթայ մոմ պատրաստելու. անմիջապէս ուրիշ մը կուգայ առաջինին գործը շարունակել, և այսպէս շարունակաբար։

Երբ խարիսխները շատ մը չինուած և լեցուած են, ուրիշ մեղուներ ծառերու պրտուղներէն «ականամոմ» կոչուած խիժային նիւթը կը հաւաքեն, որով ջիջներու մէջը կը ծեփեն, ծակերը կը գոցեն, թշնամիներու դէմ պատնէշներ կը կանգնեն, եւայլն։

ՀԻՒԹԱՔԱՂ ԿԱՄ ՄԵՂՐԱՔԱՂ ՄԵՂՈՒՆԵՐ. — Եթէ պատյտի մը համար պարտէզի մը կամ մարգագետնի մէջ դտնուիք, հոն պիտի տեսնէք շատ մը մեղուներ՝ որոնք մէկ ծաղիկէ միւս ծաղիկ կը թռին. ասոնցմէ մէկուն հետեւելու ձանձրոյթը առէք, պիտի դիտէք որ մեղուն նոր բացուելիք ծաղկի մը քովը հասնելուն պէս, իւր ոտքերով ծաղկին թերթիկները կը պատէ պատկէն, իւր գլուխը կը ծռէ ու ծծոցը ծաղկին մէջ կ'երկնցնէ. յետոյ ուրիշ ծաղկի մը վրայ կը թռի ըզգալով ու նոյն գործողութիւնը կը կրկնէ և վերջապէս փեթակ կը դառնայ։ Այս ծաղիկներէն զգուշութեամբ հատ մը ժողվեցէք այն պայ-

մանաւ որ դեռ մեղու մը այցելած չըլլայ ու թերթերը բացէք, ծաղկին յատակը պիտի նշմարէք փոքրիկ փայլուն հեղուկի կաթիլ մը ուրիշ քիչ մը լեղունուդ վրայ առնէք, անոր համ մը պիտի զգաք։ Այս հեղուկը որ «նեկտար» կը կոչուի, կը ծառայէ մեղրի պատրաստութեան. ծաղիկներու նեկտարը հաւաքող մեղուները կ՝ըսուին «հիւթաքաղ» կամ «ծաղկաքաղ» մեղուներ։

Երբեմն մեղուները ծաղիկներ չեն գտնար, բայց միշտ մեղր կը պատրաստեն ծառերու «մեղրային» կոչուած հիւանդութեամբ անուշցած տերեւներու մակերեւոյթը և կամ լուիներու մարմնէն ծորած շաքարահամ հեղուկը ծծելով։ Վերջապէս կրնայ ըլլալ որ ծաղիկները բոլորովին պակսին. այս պարագային մէջ կարելի է ասալ մեղուներուն իրը սնունդ շաքարային նիւթեր, որոնցմով դարձեալ մեղր կրնան պատրաստել։

Մեղրի յատկութիւններու և գործածութիւններուն վրայ երկարօրէն պիտի խօսինք ուրիշ առթիւ։

Մեղուներու խումբ մ՝ալ պաշտօն ունի ծաղիկներու սերմնափոշին ժողվել. ասոր համար մեղուները ծաղկին մէջ կը մտնեն, իրենց մարմինը բեղմնափոշիով կը ծածկուի. վրձիններով այդ բեղմնափոշին կը ժողվեն կողմերուն մէջ ու փեթակ կը վերադառնան։ Հոն դայեակները այսինքն փոքրիկները խնամաղները այդ բեղմնափոշին կ՝առնեն ու անով ձագուկները կը սնուցանեն։

ԽՆԱՄԱԿԱԼՆԵՐ ԿԱՄ ԴԱՑԵԱԿՆԵՐ. — Առանց պաշտօնն է փոքրիկները դատարակել, բեղմնափոշիով զանոնք սնուցանել, անոնց մարմինը մաքրել ու իւրաքանչիւրին սեփականուած պաշտօնը սորվեցնել։ Եթէ փեթակին մէջ թշնամի մը գայ նոյն իսկ պատրաստեն իրենց կեանքը զոհել ձագուկները պաշտպանելու համար։

Խնամակալներն են դարձեալ՝ որք մայր մեղուին բոլոր պէտքերը կը հոգան և զայն կը պաշտպանեն։

ՏԱՆՏԻԿԻՆՆԵՐ ԿԱՄ ՄԱՔՐՈՂՆԵՐ. — Առանց պարտքն է կարելի եղածին չափ փեթակը մաքուր պահել. ուրիշներուն աղբը դուրս կը հանեն, մեռածներու դիակները կը նետեն կամ եթէ կուխ մը վերջ շատ դիակներ գտնուին, շուտ զանոնք ականամարի տակ կը ծածկեն։ Երբ ձագուկները չափահաս ըլլան ու բջիջներէն դուրս ելնեն, անմիջապէս բջիջները կը մաքրեն։

Շատ զարմանալի է նաեւ դիտել տօթագին օրերը փոքրիկ մեղուներ, որոնք փեթակին դռան առջեւ թեւատարած կեցած անընդհատ իրենց թեւերը կ՝երերցնեն ներսը զովացնելու համար։

ՊԱՀԱՊԱՆՆԵՐ. — Վերջապէս փեթակին դռան երկու կողմերը միշտ մի քանի մեղուներ պահապանի պաշտօնով կը դտնուին, որոնք ներս մտնող մեղուները կը քննեն հոտառութեամբ, և դիւրաւ կրնան ճանչնալ օտար մեղու մը, որովհետեւ միւսներն փեթակի մեղուները մասնաւոր հոտ մը ունին, ինչպէս շատ մը գիտուններ կը կարծեն ու կը հաւատան։ Եթէ ներս մտնող մեղուն օտար մ՝է, պահապանները խայթոցով զայն կը մեռցնեն. եթէ բարեմութեամբ դան, պահապանները թշնամիին հետ կը կռուին օգնութեան կանչելով փեթակին միւս մեղուները։

Կը տեսնենք որ այս մեղուները դրեթէ ամենակարեւորներն են և միակ աշխատողները. յաւաջիկայ յօդուածով մը պիտի խօսինք մեղուներուն ծնունդին ու աճման մասին։

Ռոստոմ Մ. Կ. ՄԱԼԱՔԵԱՆ

ԳԵՏՆԱԽՆՁՈՐԻ ՄՇԱԿՈՒԹԻՒՆԸ

(Շարունակութիւն էջ 31)

Աշնան, երբ գետնախնձորի շաղղահատները, որոնք՝ ինչպէս ըսինք, ըզլիկի (տօմատէս) կը նմանին, հասունցած կերեւին, իրենց յօղուններով մէկտեղ կտրելով, շտեմարանին մէջ չոր տեղ մը շուտներու վրայ կախելու է. բայց այնպիսի տեղ մը, որ ձմրան ցուրտէն չի վնասուին. թողելու է այսպէս, մինչեւ յունվարի վերջերը, որպէս զի՝ կամաց կամաց իրենց կատարեալ հասունութիւնը ստանան։ Այդ ատեններն, մեծկակ տանի մը մէջ ջուր կը լեցնեն, շաղղահատները իրենց յօղուններուն վրայէն փրցնելով, այդ ջուրին մէջ կը նետեն, և կ՝ոտքին ձեռքով ճզմել։ Ամանին մէջ դրուած ջուրը պէտք է թեթեւ մոխիր ջուր ըլլայ, և կամ աւելի ալկը, 1 քաշ ջուրին 5 տրամի չափ «սոտա» դնել, որպէս զի՝ հունտերուն բոլորտիքը դտնուած կոշտն միսերը դիւրաւ բաժնուին։ Այսպէս լաւ մը ճզմելնէդ վերջը, 5—6 ժամ թողելու

փահատ ըլլան ու բջիջներէն դուրս ելնեն, անմիջապէս բջիջները կը մաքրեն։

Շատ զարմանալի է նաեւ դիտել տօթագին օրերը փոքրիկ մեղուներ, որոնք փեթակին դռան առջեւ թեւատարած կեցած անընդհատ իրենց թեւերը կ՝երերցնեն ներսը զովացնելու համար։

ՊԱՀԱՊԱՆՆԵՐ. — Վերջապէս փեթակին դռան երկու կողմերը միշտ մի քանի մեղուներ պահապանի պաշտօնով կը դտնուին, որոնք ներս մտնող մեղուները կը քննեն հոտառութեամբ, և դիւրաւ կրնան ճանչնալ օտար մեղու մը, որովհետեւ միւսներն փեթակի մեղուները մասնաւոր հոտ մը ունին, ինչպէս շատ մը գիտուններ կը կարծեն ու կը հաւատան։ Եթէ ներս մտնող մեղուն օտար մ՝է, պահապանները խայթոցով զայն կը մեռցնեն. եթէ բարեմութեամբ դան, պահապանները թշնամիին հետ կը կռուին օգնութեան կանչելով փեթակին միւս մեղուները։

Կը տեսնենք որ այս մեղուները դրեթէ ամենակարեւորներն են և միակ աշխատողները. յաւաջիկայ յօդուածով մը պիտի խօսինք մեղուներուն ծնունդին ու աճման մասին։

Ռոստոմ Մ. Կ. ՄԱԼԱՔԵԱՆ

ԳԵՏՆԱԽՆՁՈՐԻ ՄՇԱԿՈՒԹԻՒՆԸ

(Շարունակութիւն էջ 31)

Աշնան, երբ գետնախնձորի շաղղահատները, որոնք՝ ինչպէս ըսինք, ըզլիկի (տօմատէս) կը նմանին, հասունցած կերեւին, իրենց յօղուններով մէկտեղ կտրելով, շտեմարանին մէջ չոր տեղ մը շուտներու վրայ կախելու է. բայց այնպիսի տեղ մը, որ ձմրան ցուրտէն չի վնասուին. թողելու է այսպէս, մինչեւ յունվարի վերջերը, որպէս զի՝ կամաց կամաց իրենց կատարեալ հասունութիւնը ստանան։ Այդ ատեններն, մեծկակ տանի մը մէջ ջուր կը լեցնեն, շաղղահատները իրենց յօղուններուն վրայէն փրցնելով, այդ ջուրին մէջ կը նետեն, և կ՝ոտքին ձեռքով ճզմել։ Ամանին մէջ դրուած ջուրը պէտք է թեթեւ մոխիր ջուր ըլլայ, և կամ աւելի ալկը, 1 քաշ ջուրին 5 տրամի չափ «սոտա» դնել, որպէս զի՝ հունտերուն բոլորտիքը դտնուած կոշտն միսերը դիւրաւ բաժնուին։ Այսպէս լաւ մը ճզմելնէդ վերջը, 5—6 ժամ թողելու

է. յետոյ ջուրը լաթէ մը մղելով, հունտերը առնելու և կրկին ջուրի մէջ լեցնելու է. եթէ տակաւին կոշտուն մասերը լաւ մը չեն զատուած, ջուրին մէջ կրկին խառնելու է քիչ մը «սօսա»։ Մէկ քանի ժամ վերջը լաւ մը լուալով, նորէն լաթէ մը անցնելով, մաքուր ջուրի մէջ լեցնելու է, և մինչեւ որ կատարելապէս մաքրուին, մէկ քանի անգամներ աղէկ մը լուալու է, ուրիշ յետոյ լաթի մը վրայ տարածելով չորցնելու է։

Տաք երկիրներու մէջ, գետնախնձորի շաղշահատերը շուտ հասունալով, ամրան մէջ՝ (անշուշտ կանուխ հասնող տեսակները) ցողուններուն վրայէն կը փրցնեն, տանի մը մէջ կը ճզմեն, և կը թողուն այսպէս, մինչեւ որ հունտերուն բոլորտիքի միսերը նեխիլ սկսին. այն ատեն վերը յիշուած եղանակով մէկ քանի անգամներ կը լուան, հունտերը կը զատեն, կը չորցնեն զով տեղ մը, և կը պահեն մինչեւ ցանելու ժամանակը։ Ցաջողութեան գլխաւոր պայմանը, շաղշահատերուն լաւ հասունցած ըլլալն է։ Հակառակ պարագային, կամ հունտերը ամենեւին չեն ծլիր, և կամ անոնցմէ ելած տունկերը տկար և ապազուն կ'ըլլան։

Մարտի սկիզբները, և կամ փետրվարի վերջերը, լաւ խաւիղ (եաստրք) մը կը պատրաստեն. որուն յատակը ձիու աղբով աղէկ լեցուած ըլլալ պէտք է, որ տաք մնայ. և հունտերը կը ցանեն մէջը, և որպէս զի՝ խրտմէ հեռու խնան, մէկին երկու հաշուով, հունտերուն հետ բարակ աւազ կը խառնեն և այնպէս կը ցանեն։ Երբ օդերը ցուրտ ընեն, գիշեր ցերեկ վրանին ծածկած պահելու է, և աղէկ օդերուն ալ, ցերեկները վրանին բանալու է, բայց գիշեր�երը միշտ ծածկած պահելու է։ Երբ խաւիղի մէջ շուտ հասցընել կ'ուզէք, այն ատեն պէտք է վերջին ոռոգումները անցնելէն յետոյ ցանել. այսինքն՝ ապրիլի մէջերը, ուղղակի տնկարանի (Ֆիտանլըք) մը մէջ։

Երբ տունկերը 10 հար. մէթր բարձրութեան հասնին, և մանաւանդ տակաւին տակերնին ելունդ չի կապած, պէտք է տեղերնուն հանել և այլուր տնկել։ Այս պարագային՝ պէտք է թեթեւ և փխրուն հող մը որոշել, որ ըստ բաւականի աղբուած ըլլայ, և կրկին տնկել հոն, գետնախնձոր տնկելու սովորական հեռաւորութեամբ։ Այս գործողութիւնը կատարելու համար, կէս օրուան աշխատութեան բաւելու չափ տունկ թաց լաթով մը, կողովի մը մէջ դնեն. գործաւոր մը բահով կամ բրիչով փոսիկներ կը բանայ, ուրիշ մը, այդ փոսիկներու մէջ կը դնէ, գրեթէ հարիւրական դիրքով 2—3 տունկ մէկէն. այնպէս որ, ծածկուելէն վերջը հազիւ թէ տունկերուն ծայրերը դուրս մնան։ տունկերուն վրայ ծածկելէն վերջը, թեթեւ կերպով ձեռքով զարնելու է վրան, որ արմատներուն փակի։

Տնկելու գործողութիւնը կատարելու է ամպամած օր մը՝ առաւօտուն կանուխ։ Տընկուելէն վերջ եթէ անձրեւ չի գայ, պէտք է ջրել։ Ելունդներու մինչեւ հասունցած ատեն, գետնախնձորի սովորական մշակութեանց պէս պէտք է խնամել, այսինքն՝ բահել, քաշհանել (խոտերը մաքրել) և թմրել։ Երբ գետնախնձորի սերմանումը կանուխ կատարուի, և հունտերը աղէկ հասունցած ըլլան, բերքերը բաւական առատ կ'ըլլայ, և ելունդները մինչեւ 100 տրամ ծանրութեան կրնան հասնիլ. և երկրորդ տարին, թէ բերքը աւելի առատ կ'ըլլայ, և թէ ելունդները աւելի խոշոր։ Այս կերպով կարելի է թէեւ ընդարձակ մշակութեան համար սերմանումը գործադրել. բայց աւելի ձեռնաշխատութիւններ պահանջելուն, մշակութեան ծախքերը կը շատնան, և հետեւարար ալ միջոցը իր խնայողական չի նկատուիր։ Երբեմն տարիներ կ'ըլլան, ուր գետնախնձորները շատ քիչ բերք տալով, կարելի չըլլար անոնցմէ իր հունտ՝ անկելու համար զատել, այն ատեն ապահովաբար սերմանումը կարելի է գործածել։ Եթէ սերմանումով յառաջ բերուած գետնախնձորի տունկերը առանց տեղերնին փոխելու, ցանուած տեղերնին ձգուի. առաջին տարուան ելունդները շատ փոքր կ'ըլլան, և իրենց վերջնական մեծութեան կը հասնին երկրորդ տարին, և ոմանք ալ մինչեւ երրորդ տարին։

Ինչպէս ըսինք, այսպէս սերմանումով կարելի է նոր նոր տեսակներ, և տարբեր հողերու յարմար գետնախնձորներ յառաջ բերել, որ առաւելութիւն մ'է։

(Շարունակելի)

Գ. ԲՈԼԱՏ

ԱՐՏՕՆԱՏԷՐ Ա. ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՀԱՃՈՅՔ ՄԸ

ՈՐ ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆ ԿԸ ՊԱՏՃԱՌԷ

—

Ճշմարիտ հաճոյքն այն է որ, ախորժելի ժամանց մը ընծայելով հանդերձ, առողջութեան ալ մեծապէս կ'օգնէ։ Ներկայ դարուս մէջ հաճոյքի նիւթերը բազմաթիւ են. սակայն զարգացած ազգեր ամենէն աւելի թիւին նախապատուութիւն կուտան, անոր համար որ, այս թանկագին բնկելին ամենածանր յոգնութիւնները շուտով կ'անցնէ և նոր կորով կը ներշնչէ, մարդուս ձգած աշխատութիւնը վերակենդանացնելու։ Զմեռը արիւնը տաքցնելով, մարմինը ցուրտին դէմ կը պաշտպանէ՝ ամառն ալ զովութիւն ընծայելով, շատ մը հիւանդութեանց առաջքը կ'առնէ։ Խնամով պատրաստուած գաւաթ մը թէյը, նոյնչափ մաքի ջուրի հաւասար սնունդ կը պարունակէ և իր անբաղդատելի ազնուութեամբ կատարեալ նախախնամութիւն մըն է մարդկութեան համար։ Սակայն աւա՜ղ որ թէյն անուամբ ծախուածներու մեծագոյն մասը խարդախուած ըլլալով, զուրկ են այս առաւելութիւններէն և զանոնք ճանչնալն շատ դժուար է, ուստի անոնք որ կը փափաքին ԸՆՏԻՐ, ԱՆԽԱՐԴԱԽ և միւնոյն ատեն ԱԺԱՆ թէյ խմել, պէտք է Կ. ԵՎՐՈՒԵԱՆ և Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ ԸՆԿԵՐՑ թէյերը գործածեն. ուշադրութեամբ փընտռելով անոնց անունն ու մասնանիշը տուփերու վրայ։ Որովհետև թէյի այս մեծ վաճառատուն, իւր երկարամեայ փորձառութեամբ, արեւելեան երկիրներէ մեծաքանակ թէյ արտածելուն և ահագին ապրանքներ ստանալուն շնորհիւ, միշտ անխարդախ թէյ կը ծախէ ԱՆՄՐՑԵԼԻ գիներով։ Ընկերութեան կեդրոնատեղին է Կ. Պոլիս, Ճէլալ Պէյ խան, թիւ 10։

ՄԱՐԳԱՐԵԱՆ ԳՐԱՏՈՒՆԸ կը ծանուցանէ թէ Մանկավարժական Քերականութեան Գ. մասը տպագրութեան յանձնուած է։

Մայթերաչափ Սիսթէմի Գաղղիերէն մասի ԺԱ. տեսարը հրատարակուած է և բաժանորդագրութիւնը փակուած։

Գին 12 տեսարերու 25 ղրուշ։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

—

Պոլսոյ եւ Գաւառաց համար

Հանրագիտակ տարեկան	50 ղրշ.
» Վայելչազարդութեան բաժինով	80 »
Հանրագիտակ միայն Վայելչազարդութեան բաժին	60 »
Հանրագիտակ Վայելչազարդութեան բաժին գունաւոր եւ մեծագիր 36 պատկերներով	110 »

Արտասահմանի համար

Հանրագիտակ տարեկան	15 ֆր.
» Վայելչազարդութեան բաժինով	20 »
Հանրագիտակ միայն Վայելչազարդութեան բաժին	16 »
Հանրագիտակ Վայելչազարդութեան բաժին գունաւոր եւ մեծագիր 36 պատկերներով	25 »

ՀԱՒԱՆՈՒԹԵԱՆ ԳԻՐ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ
Վ.ԱՅԵԼՉԱԶԱՐԴՈՒԹԵԱՆ ԲԱԺԻՆԻՆ

—

Ղ. ԲՈԼԱՏ

Խմբագրապետ Հանրագիտակ Հանդէսի

թիւ 19 Էսկի-Զապթիյէ

Կ. Պոլիս

Տէր.

Գնահատելով Ձեր հանրօգուտ ձեռնարկը, հաճեցէք վիս բաժանորդ արձանագրել թերթիդ վայելչազարդութեան բաժնին . . . . . .
և . . . . . .
. . . . . .

Սորոբոբեան
(Ընթեռնլի)

1898

Բնակութեան տեղ
Հասցէ

Ա Զ Դ

ՄԵՐ ՀԱՍՑԷՆ

Կը խնդրուի թերթիս հետ առնչութիւն ունեցող ամեն անձերէ (գործակալ, բաժանորդ, ևն.) որ բարեհաճին իրենց թղթակցութիւնները ուղղել հետևեալ հասցէին, ԱՌԱՆՑ ՈՐԻՇ Ո ԵՒ Է ՄԻՋՆՈՐԴԻ. հակառակ պարագային, եթէ անպատեհութիւններ տեղի ունենան, ամեն գանգատ անլսելի մնալով, պատասխանատու չենք ըլլար։

درعلیده بغچه قپوسنده اسکی ضبطیده
صوباجی پارسغ افندینك ۱۹ نومرولی دکاننده
«مجموعهٔ علوم» غزته‌سی (پولاد) افندی یه

Ղ. Բոլատ Ցեռէն-Խրբադրապետ
«ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ»
19. Էսկի-Զաբթիէ Պաղչէ-Գափու
Սթամպօլ

H. Polad Rédacteur en chef du journal
"HANRAKIDAK,,
Chez M. Parsegh Hazarossian
19. Rue Eski-Zabtié Bahdjé-Kapou. 19
Stamboul

ՄԵԾ ՄԹԵՐԱՆՈՑ ԴԵՂՕՐԷԻՑ

Լ. ԱՐՍԼԱՆԵԱՆ ԵՒ Ս. ԷՄԻՐԶԷ

Կ. ՊՈԼԻՍ ՖՆՏՐԼԵԱՆ ԽԱՆԻ ՏԱԿ ԹԻՒ 3

Սոյն վաճառատունն պատրաստ է մատակարարել մեծ ու փոքր քանակութեամբ՝ ամեն տեսակ թարմ դեղօրայք. վիրաբուժական գործիքներ, Անդղիական և Գաղղ. պատրաստ դեղեր, գօնեակներ, գինիներ և հանքային ջուրերու մեծ մթերք մը, յարմար դներով։ Լ. Արսլանեան և Ս. Էմիրզէ Ընկերութիւնը երկար ատեն անձնական փորձառութիւններ ունին։ Ամեն ջանք և աշխատութիւն չեն խնայեր իրենց յաճախորդներն գոհացնելու համար, մասնաւոր ուշադրութիւնը կը հրաւիրենք գաւառաց համար, որոնց կը ղրկեն դեղօրայք, ամենայն արագութեամբ, թարմ և մատչելի գներով։

ԳԱՐԹԱԿԱԼԻՔ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ

Այնթապ — Գարեգին էֆ. Պօղարեան
Ասա-բազար — Ստեփան էֆ. Սափրիչեան
Արաբկիր — Գ. Տէվէճեան էֆ.
Էրզրում — Եդ. էֆ. Տ. Ազարեան
Թէհրան — Կարապետ էֆ. Բաբարեան
Իզմիր — Կարապետ էֆ. Մալէճանեան
Իզմիտ — Աբրահամ էֆ. Կ. Կտաւճեան
Մակարա — Վ. Մանուկ էֆ. Զօլաքեան
Խարբերդ — Խոսրով էֆ. Քէչիչեան
Թրէպոլի. — Գալուստ էֆ. Գըլըճեան
Սինոպ. — Յ. էֆ. Պետրոսեան
Կիրասոն. — Արմենակ էֆ. Սօմունճեան
Մարաշ — Արժ. Տ. Յովհաննէս քահանայ Վարժապետեան
Մանիսպր. — Յակոբ էֆ. Բոլատեան
Պանտրմա. — Արմենակ էֆ. Ս. Մսերեան
Սըվազ. — Յ. էֆ. Գարակէօզեան
Տրապզոն. — Սահակ էֆ. Էթմէքճեան
Կէլիպոլու — Յովսէփ էֆ. Տէր-Յովսէփեան
Մանիսա. — Մկրտիչ էֆ. Երկանեան
Աֆիոն-Գարա-Հիսար. — Արտաշէս էֆ. Հալէպլեան

Հանրագիտակ կը ծախուի ամեն լրագրավաճառաց քով, մասնաւորաբար

Մագրի-Գիւղ, Պօղոս էֆ. Աղնաւորեանի խանութը։
Գասը-Գիւղ, Լեւոն էֆ. Զպուրճեան Դեղարանը։
Բերա, Մեծ փողոց Գառնիկ էֆ. Կիւլէրեանի խանութը։